ՏԷՐՏԷՐ.– Եւ եղիցի՛,

ԲՈԼՈՐԸ.– Ամեն:

ՆԱՁԻՐ.– Ստուեր աստուծու: Երջանիկ միտք է ծագել արքայական գլխիդ մէջ: Հրամայիր կատարենք:

ՆԱՁԱՐ.– Հիմի ես հրամանք եմ անում թագաւորական: Գնացէք նոր զօրք կապեցէք եւ հրաման տուէք իմ կողմից, որ գնա ողջ աշխարհքի վրայ, թալանի ու բերի ինձ: Ժողովրդին էլ հրամանք, որ նոր հարկեր տա: Իմացա՞ք:

ԲՈԼՈՐԸ.– Իմացանք, թագաւոր սուրբ:

ՆԱՁԻՐ.– Ղոռոբուղա, իմացա՞ր:

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– Հա՛մմ, իմաացա, թաագաւո՛ր,

ՆԱՁԱՐ.– Այ զահրումա՛ր քեզ, քար ու քացա՛խ: Քաղցրացրու ձենդ, էլի՛, դու էլ: Չեղաւ, որ մի քաղաքավարութիւն սովորեցնեմ: Հայվան: (Տէրտէրին) Հոգեւոր տէր, դու էլ գնա, հոգեւոր դասը առ ու խաչխաչվառով արի ինձ եկեղեցի տար: Աղօթք պիտի անեմ աշխարհքի փրկութեան համար: (Բոլորին) Դե, հիմի հայդէ, թագաւորական խորհուրդ ունիմ կնկանս հետ:

ԲՈԼՈՐԸ.– Աստուա՛ծ պահէ թագաւորին: (Գնում են, բացի նազիր-վեզիրից:)

ՄՈՒՆԵՏԻԿ.– (Դրսից) Պատերա՛ա՛ա՛զմ... (Աղմուկ է լսւում, որին հետեւում է դհոլ-զուռնայի ձայնը:)

ՆԱՁԻՐ.– (Դուրս է գնում ներքեւի պատշգամբը:) Լսեցէ՛ք, ո՛վ զօրք ու ժողովուրդ: Մեր ազատարար եւ սուրբ թագաւորը բազմաթիւ թշնամիներից մեր երկիրը ազատելուց յետոյ, աստուածային սուրբ Հոգու զօրութեամբ, վեր է կենում ազատելու ամբողջ աշխարհը անարժան թագաւորներից: Խստագոյն հրաման է, որ ժողովուրդը հարկ տայ եւ զօրքը գնա տիրի ամբողջ աշխարհքին: Յաջողութիւն թագաւորին եւ յաղթությո՛ւն ձեզ;

ԶՕՐՔ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴ.– (Դրսից) Կեցցէ՛ մեր քաջ թագաւորը: (Ռազմի փողեր, երգ, զուռնա, զէնքի շառաչ, որ հեռանում է:)

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– (Ներս մտնելով) Ժպի՛տ հիւրընկալութեան, թագուհին բարեհաճում է ընդունուելու:

ՆԱՁԱՐ.– Հը՞:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– Թագուհին գալիս է: